

«ՄԵՓՈՐԵԱԼ /ՄԵՓՈՐԵԼ/ ՄԻՓՈՐԵԼ» ՎԱՐՉԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԸ

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Միջնադարյան վիճազրեբրի ուսումնասիրութեամբ հաճախ երևան են գալիս ոչ միայն նոր բառեր ու բառաբարդութիւններ, այլև վարչական, հարկային ու պարհակային նոր տերմիններ, որպիսիք ավանդված չեն մատենագրական աղբյուրներում կամ տակավին անհայտ են: Այդպիսի տերմիններից է նորատուքի (նորատու) «Հաղախաչ» խաչքարի պատվանդանի արևմտյան և հարավային երեսներին փորագրված արձանագրութեան մեփոքել, մեփոքուալ-ը, որ մեկ անգամ էլ գործածված է պատմական Սողոմոնի Ականք (Ակունք) գլուղի խաչքարի շրջանակների վիճագրոս<sup>1</sup> մեփոքել ձևով (միփորելաց): Հիշյալ արձանագրութիւնների նորագույն հրատարակութիւնը պատկանում է երախտաշատ Ս. Բարխուդարյանին: Ստորև տալիս ենք նրա վերծանութիւնը.

ա) նորատուքի «Հաղախաչի» «պատվանդանի վրայի բարձի արևմտյան երեսին, 6 տող».

ԱՆՈՒԱՄԲՆ ԱՅ: ՈՂԵ, (1226) ԹՎԻՍ, ՅԻՇ/ԽԱՆՈՒԹԵԱՆ ԱԹԱԲԱԿԻՆ ԻՒԱՆ/Ա ԵՒ ԱԻԱԳԻՆ, ՇԱՀՆՇԱՀԻ, ԵՍ ՄԵՓՈՐԵԼ/ԽՈՇԱՔԻՆ ՍՆՈՒՅԱԾՍ ՆՈՐԱՏՈՒՍ ԿԱՅՈՒՅ ԶԻՍ/ՈՐԺԱՄ ԱՅՈՒ ԲԱՐԿՈՒԹԵՆ ՇԱՐԺԵՑԱԻ ՍՈՒԼՏԱՆԵ/ԽՈՐԱՍԱՆԱ ԿՈՏՈՐԱԾՍ ԲԱԶՈՒՄ ԱՐԱՐ<sup>1</sup>:

բ) «նույն բարձի հարավային երեսին, 5 տող».

ՄԵՓՈՐԵԱԼ ՇԻՆԻՍ, ԽԱԴԱԿՍ, Հ/ԱՆԻ ՓԱՍԻԼ ՇԻՆԵՅԻ ԽԱԶՍ, ԿԱՆԳ/ՆԵՅԻ Ի ՓՐԿՈՒԹԻՆ ԻՆՁ, ԾՆՈՂԱ/Յ ԻՄՈՑ, ՅԵԶՐ ՄԵՅԴԱՆԻՍ/ ՈՐՔ ԵՐԿՐՊԱԳԷՔ ՀԻՇԵՅԷՔ<sup>2</sup>:

գ) Ականքի «Գոմեր» հնավայրի խաչքարերի առաջին շարքի կենտրոնում. քիվին, կողքերի շրջանակներին և հարավային կողին 24 տող».

Ի ԹՎ.: ՉԽԶ:(1297). ԿԱՄԱԻՆ ԱՅ. Ի ՊԱՐՈՆՈՒԹՐ. ԻՇ/ԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ/ԻՆԳՐԻԳՐՈՅ ԵՍ ՏԱՇՈՒՐԱԿՍ, ՈՐԴԻ ԲԱ/ԶՈՒՄՇԱԻ, ՏԷՐ /ՄԵՓՈՐԵԼԱՅ ԿԱՆԳՆԵՅԻ ԶԽԱԶՍ /ԻՆՁ/ ԵՒ ԱՄ/ՈՒՍՆԻՆ ԻՄ/ՈՅ ԹԱՄԹՈՅ Ի Փ/ՐԿՈՒԹԵ. ՀՈԳՈՅ /ՄԵՐՈՅ/, ԶԻ ԷԱՔ ԱՆ/ԶԱԻԱԿ ՈՐՔ ԵՐԿԻ/Ր ՊԱԳԱՆԷ/Ք ՅԱՂԱԻԹՍ, ՅԻՇԵՅ/ԷՔ<sup>3</sup>:

Ինչպես հայտնի է, Ս. Բարխուդարյանին վիճակված չէր մինչև ավարտվեալ հսկել «Գիվանի» IV պրակի հրատարակութիւնը, ուստի մեր բերած

<sup>1</sup> «Գիվան հայ վիճագրութեան», պրակ IV, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 22 (№ 42):

<sup>2</sup> նույն տեղում, էջ 23:

<sup>3</sup> նույն տեղում, էջ 355 (№ 1427):

տեքստերում կան մանր-մանր վրիպումներ, որ այստեղ անհրաժեշտ ենք համարում սրբագրել.

Առաջին արձանագրություն. ԻԻԱՆԱ ԵՒ ԱԻԱԳԻՆ կապակցության փոխարեն հստակորեն վիճադրված է ԻԻԱՆԱԻ, ԱԻԱԳԻՆ, իսկ ԱՅՈ ԲԱՐԿՈՒԹԵՆ-ը սրբագրելի է ԱՅ ՈՐ ԲԱՐԿՈՒԹԵՆ(ԱՆ)Ն: Գրիչը վրիպել է և ԿՈՏՈՐԱՄ թառի Ա-ն կրկին փորագրել: Ինչ վերաբերում է ՍՆՈՒՑԱՄ ՆՈՐԱՏՈՒՄ ԿԱՑՈՒՑ-ին, ապա Ի-ի հավելումն ավելորդ է, քանի որ գրիչն այն դանց չի առել ՅԻՇԽԱՆՈՒԹԵՆ, ԲԱՐԿՈՒԹԵՆ և ՍՈՒՆԱՆ թառերում, հետևաբար գործ ունենք ՈՒ>Ո և ՈՅ>ՈՒ>Ո հնչյունափոխության հետ, ինչպիսին դիտված է XIII դ. այլ վիճագրերում ևս<sup>4</sup>:

Երկրորդ արձանագրություն. վերծանության ՄՆՈՂԱՑ ճիշտ ընթերցման փոխարեն վիճագրում ունենք ՄՆՈՂԻԱՅԻՑ սխալագրությունը, որ անհրաժեշտ է պահել նույնությամբ, ԵՐԿՊԱԳԻՔ-ի փոխարեն՝ ԵՐԿՊԱԳԵՔ, իսկ ՀԻՇԵՑԷՔ բայը ամենևին չկա, ուստի լրացման նշան պիտի ունենա, ընդ որում՝ ՅԻՇԵՑԷՔ գրությամբ: Առկա վերծանության մեջ անհասկանալի է շարագրանքը, տերմիններն ու անձիք շփոթված են:

Երրորդ արձանագրություն. վերծանության մեջ, ելնելով հրապարակված գրչանկարի համեմատությունից, վրիպումներ գրեթե չկան: ԲԱՋՈՒՄՇԱԻ-ն պիտի սրբագրել ԲԱՋՈՒՄՇԱՀԻ, ՅԻՇԵՑԷՔ-ը՝ ՅԻՇԵՑԵՔ: Նկատի առնելով արձանագրության ոճական-բարբառային ինքնատիպությունը, կարելի էր ՁԽԱՉՍ, ՅԱՂԱԻԹՍ թառերի ընդգծված նիշերը չլրացնել, որքան էլ դրանք պահանջվեին ավանդական քերականությամբ:

Վերոհիշյալ դիտողությունները ի մի բերելով, մեփոքել / մեփոքեալ / միփոքել տերմինը բովանդակող արձանագրությունները պիտի սրբագրել.

ա) Անուամբն ա(ստուծո)յ, ՈՀԵ (1226) թվիս, յիշխանութե(ան)ն արաբակին Իւանաի, Աագին, Շահնշահի ես՝ մեփոքելս, Խոշափին սնոցածս, Նորատոս կացոց զիս ուժամ, ա(ստուծո)յ ո՞րաբկութե(ան)ն, շածեցս սուլտանն Խորասանա, կոտորածս բազում արար:



<sup>4</sup> Ս. Ա. Ավագյան, Վիճական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973 (ժամանակագրական տախտակ):

բ) Մեփորեալս շինիս խաղակս հանի, փասիլս շինեցի, խաճս կագնեցի՝  
[ի] փրկութիւն ինձ, ծնողիայից իմոց յեզր մեղանիս: Որք երկպագեք...



գ) Ի թվ(իս) ՋեՋ (1297), կաման ա(սառւծո)յ ի պարունութ(եամ)ք իշ-  
խանաց իշխանին Գրիգորոյ ես՝ Տաշուրակս, որդի Բագումշահի, ա(է)ր  
միփորելաց, կագնեցի զխաչ ինձ եւ ամուսնին իմոյ Քամթոյ՝ ի փրկու-  
թե(ան) հոգոյ մերոյ, զի էաք անգաւակ: Որք երկիր պագանէք՝ յաղաք  
յիշեցեք:

Ս. Բարխուդարյանը, ինչպես երևում է, այս արձանագրություններում հանդիպող մեփորել / միփորել տերմինի նույնականությունը չի նկատել, և քանի որ այն ուրիշ աղբյուրներից հայտնի չէ՝ մեկնաբանել է առանձնակի, վիճաբարի շարադրանքից ելնելով: Նորատուրքի տեղագրման առթիվ նա գրում է, որ այն «Հնուց, մինչև XIX դարի սկիզբը եղել է Մմակ գավառի (Կամոյի շրջան) վարչական կենտրոնը, Ջաջարյանների ժամանակ այստեղ է նստել նրանց կառավարիչը, որն արձանագրությունների մեջ կոչված է դեմեթար, մեփորել կամ առաջնորդ»<sup>5</sup>: Մեփորել-ի հիշյալ նշանակությունը, անշուշտ, մակաբերվել է «մեփորեալս շինիս» արտահայտությունից (իմա՝ շենի, գյուղի, բնակավայրի մեփորեալ), մինչդեռ Ականքի վերոբերյալ արձանագրությունը ծանոթագրված է. «Միփորել ԱՅ տեղանունը կարելի է և Միփորել ԱՅ վերծանել»<sup>6</sup>: Վերջին իմաստը «տէր միփորելաց» արտահայտության մեկնաբանու-  
թյան արդյունք է<sup>7</sup>:

5 «Գիվան հայ վիճաբարության», IV, էջ 11:  
6 Նույն տեղում, էջ 355:  
7 «Գիվանի» ցանկերում Նորատուրքի իաչքարի մեփորելը դիտված է իբրև անձնանուն (էջ 502), իսկ Ականքինը՝ տեղավայր (էջ 519): «Առարկայական ցանկում», սակայն, առված է «մեփորել տե՛ս առաջնորդ»:

Մեփորեի / մեփորեալ / միփորեի տերմինի այլագրությունները զուտ արտասանական-գրչական են, ինչպես որ Իւանէ-Իւանա-ն, Նորատոս-Նորատոս-ը, Խաչ-Խաճ-ը, կանգնեցի-կազնեցի-ն, փրկութիւն-փրկութիւն-ը և այլն, ուստի դրանք նկատառելի են ստուգաբանական քննութիւն կատարելիս, իսկ տերմինի իրական նշանակութիւնը ճշտելու համար որևէ խոչընդոտ չեն հարուցում: Այլ աղբյուրների դիմելուց առաջ փորձենք պարզել տերմինիս բովանդակութիւն միասնականութիւնը ըստ առկա վիճագրերի:

Ինչպես արդեն նկատեցինք, առավել որոշակին ու դյուրին մակաբերվողը գործածութիւն երկրորդ դեպքն է, ըստ որի դյուզի մեփորեալը «մեզանի եզրին», «խազակ է հանել», «փասիլ է շինել» և «խաչ կանգնեցրել»<sup>8</sup>:

Այս ծավալի ու նշանակութիւն աշխատանք կատարելու համար պիտի որ մեփորեալ-ը բավականաչափ իրավունքներով ու պարտականութիւններով օժտված պաշտոնյա լիներ: Եվ հիրավի, արձանագրութիւն առաջին մասի ուսումնասիրութիւնն ընդլայնում է մեր պատկերացումները. Նորատուք շենի մեփորեի / մեփորեալը իրեն կոչում է «նոշաքին սնոցածս», ասել է, թե՛ Զաքարյան տանը ծառայող որևէ ձեռնավոր է, գուցե և մինչև Նորատուք հաստատվել: որ այլուր պաշտոնավարած մի անձնավորութիւն: Հիշենք, որ անկախ կախյալութիւն աստիճանից, ոչ բոլորը կարող էին իրենց Զաքարյան տան ներկայացուցիչներից որևէ մեկի «սնուցածը» համարել: Այդ տերմինը պատրոնից կախյալ որոշակի դիրք ու առնչութիւն է ենթադրում, ընդ որում՝ վերաբերելով և հոգևոր դասին՝ ինչպես որ արձանագրված ենք գտնում Ախթալայի վրացերեն վիճագրերից մեկում, ուր վանական առաջնորդ (Մօնօմօղջօճօ) Պետրեն իր «արժանավոր սնուցողներ» է կոչում (...Յամօճօղջօճօ Լօճօճօ հցմօճօ...) Ավագ աթաբեկին ու նրա տունը<sup>9</sup>: Մեփորեի պաշտոնեցիական կարևորութիւնը վկայող մյուս փաստն էլ այն է, որ ոչ թե շենն է նրան ընտրում (ինչպես կատարվում էր գեղջավադի, տանուտերի հետ), այլ «սնուցողն» է նշանակել՝ «նորատուս կացոց զիս»: Տեղիս մյուս արձանագրութիւնները հնարավորութիւն են տալիս առավել ճշգրտելու այս եզրակացութիւնը: 1226 թ. նախորդող տարիներին Նորատուքում պաշտոնավարելու նշանակված անձիք իրենց կոչում են դեմեթար կամ առաջնորդ («Ես Միսիթար Նորատուք դեմեթարս...», «Ի ՈԿ (1211) թվ ... ես Միսիթար... հրամանաւ մեծին Իւանէի եղէ առաջնորդ մեծահոշակ գեաւդիս Նորատուք...», «Ի թ(վի)ս ՈՀԴ (1225) ես Խոդան Ծ ամ դեմեթար կացի Նոր<ատուք>...»<sup>10</sup>:

Դեմեթար / առաջնորդ և մեփորեի / մեփորեալ վարչական տերմինների նույնիմաստ լինելն ապացուցվում է նաև առկա վկայութիւնների ժամանակագրական վերլուծութիւնով. 1211 թ. Նորատուքի դեմեթար-առաջնորդ է նշանակվել Փեճուրանց Դավթի որդի Միսիթարը, 1220—1225 թթ. այդ պաշտոն-

<sup>8</sup> «Նազակ» և «փասիլ» տերմինների քննութիւնը կատարել և հրատարակութիւն է պատրաստել վիճագրագետ Ս. Ավագյանը, ուստի դրանց չենք անդրադառնում:

<sup>9</sup> Պ. Մ. Մ ու ր ա դ յ ա ն, Հայաստանի վրացերեն արձանագրութիւնները, Երևան, 1977, էջ 219—221:

<sup>10</sup> «Դիվան հայ վիճագրութիւն», IV, էջ 20 (№ 32, № 33), էջ 25 (№ 49), հմմտ. Ս. Գ. Բ ա ր ի ու դ ա ր յ ա ն, Սոցիալ-տնտեսական բովանդակութիւն արձանագրութիւններ և դիտողութիւններ («էջեր հայ ժողովրդի պատմութիւն ե բանասիրութիւն», Երևան, 1971, էջ 75—76):

նում նրան փոխարինել է որդին՝ հոյտա / հողա-ն, որը «Ծ ամ» դեմեթար է «կացել նորատուաց»<sup>11</sup>: Մեր քննության առարկա արձանագրության մեջ ասված է, թե «նորատոս կացոց դիս որժամ... շաժեցաւ սոլտանն հորասանա, կոտորածս բաղում արար»: հորասանի սուլթանը Ջալալբեդինն է, որ «ի վեց հարիւր եօթանասուն և չորս թուին» (1225) «կոտեաց իւր զօրս անթիւս ի պարսից և ի տաճկաց և ի թուրքաց և եկն յաշխարհս Հայոց»<sup>12</sup>:

Ուրեմն, արձանագրության հեղինակը մեփորելի պաշտոն է ստացել 1225 թ., ըստ ամենայնի փոխարինելով այդ նույն ՈՀԴ (1225) թվականին վախճանված հոյտա / հողային (վերջինիս թողած արձանագրությունը գտնվում է «գերեզմանատան հարավային մասում», խաչքարի պատվանդանի վրա): Եթե մեփորելն ու դեմեթար / առաջնորդը տարբեր պաշտոններ լինեին, ժամանակագրական այսպիսի հաջորդականություն չէինք ունենա:

Այժմ անդրադառնանք մեփորել / մեփորեալ, միփորել վարչական տերմինի երրորդ գործածությանը: Արձանագրությունը, ինչպես ասվեց, գտնվում է պատմական Սողո գավառի Ականք (Ակունք) գյուղում (հին Ղըրխբուլախ կամ «Գոմեր» տեղանքում): Սկզբնաղբյուրներից քաջ հայտնի է (Ստ. Օրբելյանի «Պատմություն», հիշատակարաններ, արձանագրություններ և այլն), որ այս գավառը Դոփյան իշխանական տան տիրույթն էր, ուստի մեզ հետաքրքրող արձանագրության հեղինակը՝ Տաշուրակը, հիշատակարան է փորագրում «ի պարոնութեամբ իշխանաց իշխանին Գրիգորո» (իմա Հասան Բ-ի որդի Գրիգոր Բ, ամուսին Տաբսայիճ Օրբելյանի դուստր Ասփայի)<sup>13</sup>, իրեն կոչելով «տէր միփորելաց»: Այստեղից հետևում է, թե մեզ հետաքրքրող տերմինի հոգնակի ուղղականը «իտի լինի միփորելի կամ միփորեալի (եթե վիմագրվածը կարդանք միփորելեաց), եզակին՝ միփորել կամ միփորեալ: Ուրեմն՝ եթե ամեն գյուղ ու ավան ուներ իր մեփորել / առաջնորդը, ապա կար և մի այնպիսի պաշտոնյա, որին անմիջականորեն ենթարկվում էին հիշյալ մեփորել / միփորել / առաջնորդները: Այդ պաշտոնյան ըստ ամենայնի իրեն կարող էր «տէր միփորելաց» կոչել: Մեղանշված կրիներնք պատմական իրականության դեմ, եթե ամենուր «տէր» հասկացությունը հարաբերեինք միայն աշխարհագրական տարածքի և սեփականության: «Տէր» տերմինը հաճախ նույնանիշ է «պարոնին»: Մեր հիշատակած Գրիգոր իշխանաց-իշխանը «Թարգմանչաց ավետարանի» հիշատակարաններում մեկ «պարոնաց պարոն» է հորջորջված, մեկ էլ՝ «տէր և պարոն»<sup>14</sup> «նորատուաց մեծ և փոքր ամէն»-ը 1258 թ. արձանագրության մեջ հողաքին ու աթաբեկ Սաղունին կոչում են իրենց տե-

11 «Գիվան հայ վիմագրություն», IV, էջ 26 (№ 53), հմմտ. Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 76:

12 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 224: Եղևույթունն այնքան հանրահայտ է, որ ավելորդ ենք համարում ուրիշ աղբյուրներ ու գրականություն հղել:

13 Մանրամասն տե՛ս Բ. Ա. Ուլուրարյան, հաշենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975, էջ 315—321:

14 Լ. Ս. հաշիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 84, հմմտ. Բ. Ուլուրարյան, նշվ. աշխ., էջ 317, 320:

բեր (ստէրանց մերոց)<sup>15</sup>, ինչպես որ Տիգրան Հռոմէացի սամարսպասալար Զաքարիային ու նրա որդի Շահնշահին է կոչում իր տները (ստէրանց իմոց)<sup>16</sup>:

Ի թիվս այլ նշանակութունների, «սէր» և «տերութիւն» տիրմիներն արտացոլում էին ոչ միայն աշխարհականների իրավական հարաբերութունը, այլ նաև որոշակի իրավունք հոգևոր հաստատութեան հանդեպ, ընդգրկելով պարոն-պատրոն ինստիտուտի փաստական կիրառութունը<sup>17</sup>:

Ծթե մեփորել / միփորել-ը դյուղի առաջնորդն էր ու նշանակով վերակացուն, կառավարիչը, ապա Ականքի արձանագրութեան Տաշորակը մի քանի գյուղերի մեփորել / միփորելների վերակացուն է, նրանց կառավարիչը, պարոնի կողմից նշանակված, ուստի իրեն կոչում է «սէր միփորելաց»:

Որպեսզի թյուր տպավորութուն չստեղծվի, թե մեղ հետաքրքրող տերմինի առաջնորդ համապատասխանութունը սահմանափակվել է XIII դարով և միայն Գեղարքունիքի տարածքով, անհրաժեշտ ենք հստակացնել, որ «գյուղի առաջնորդ» հասկացութունը գործածված է և Սոգք գավառի (Վարդենիսի շրջան) արձանագրութուններում՝ XVI դ. ներառյալ: Զառքենդի մոտ գտնվող գյուղատեղիի վիճագրում (1552 թ.) «Գեղիս առաջնորդը Ուլուան է<sup>18</sup>, Տաշուրակի թողած արձանագրութեան տեղից ոչ շատ հեռու (Կլոր դար) «Ականց առաջնորդը» (նույն Ակունքն է) ոմն Միրզաճան է (XV—XVI դդ.)<sup>19</sup>, այստեղից հեռու չէ և «տեղոյս առաջնորդը» Ոհանեսի արձանագրութունը (XVI դ.)<sup>20</sup>, Ի վերջո ասենք, որ հին անունն անհայտ Ղամիշլի գյուղում երկու վիճագիր հիշատակարան կա, ուր խոսվում է գյուղի կին առաջնորդի մասին. «Խաչա բարէխաւս Ատիսին, որ է մայր Մէլխանին և առաջնորդ...» և ապա՝ «Այս է հանգիստ Ատիսին, որ է (30) տարի առաջնորդ է կացեալ գեղոյս»<sup>21</sup>: Այլևս կասկած չի մնում, որ «առաջնորդը» դէմքաբար / միփորելի տեղական ու տարածուն նույնանիշն է և, որ նույնպես ուշագրավ է, այգ պաշտոնը կարող էին ստանձնել և կանայք:

Նորատուքի և Ականքի արձանագրութուններում հանդիպող մեփորել / մեփորեալ / միփորել տերմինի նշանակութունը հշտեկուց հետո էլ ուսումնասիրողի մոտ որոշ տարակուսանքներ են մնում. միթե այդ տերմինը մատենագրական որևէ աղբյուրում վկայված չէ, արդյոք կարելի է նրա գործածութեան շրջանակները սահմանափակել միայն Գեղարքունիքով, այն էլ բացառապես XIII դ. ընթացքում: Հետազոտութունից պարզվում է, որ լրացուցիչ քննութեան աղբյուրներ, այնուամենայնիվ, կան: «Քարթլիս ցխովրեբայի» XII դ. կեսերի հայերեն թարգմանութեան մի հատվածում, ուր խոսվում է նունե / նի-

<sup>15</sup> «Գիվան հայ վիճագրութեան», IV, 13 (Ձ 1):

<sup>16</sup> «Գիվան հայ վիճագրութեան», I, 63:

<sup>17</sup> Հմմտ. Կ. Կ. Ю з б а ш я н, Аняйская рукопись 1258 г. («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2, էջ 86):

<sup>18</sup> «Գիվան հայ վիճագրութեան», IV, էջ 309 (Ձ 1275):

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 360 (Ձ 1451):

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 366 (Ձ 1473):

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 372, 373 (Ձ 1498, 1500): Հմմտ. Ս. Գ. Բ'աբո թւ ու ա թ յ ո ն, Հայ կնոջ իրավական վիճակը միջին դարերում, ՊԻՀ, 1966, № 2, էջ 38—39:

նորի վրաստան գալու և նախորդ շրջանի կենաց պատմության մասին, երկու անգամ հանդիպում է նշանակությունն անհայտ մի տերմին.

«Եւ եզիտ անդ երկու որբս, եկեալ ի վլաստրատայ զկնի մահուան ծնաւոց իրեանց քրիստոնէից, անուն միոյն Յորնաղ, և քոն իւրոյ՝ Սուսան, որ ծառայէր զնիափոր (var. գնիափոր) Բեղղայեմացի. և առ Զարողոն զՍուսան իւր ի կնութիւն, և գնաց ի վլաստատաս քաղաք, և ծնայ ես ի նոցանէ: Եւ իմ եղեալ երկոտասանամեայ՝ եկին յերուսաղէմ, և հայրն չոգաւ յանապատ, զիս յԱստուած յանձնեալ և ի շնորհն Քրիստոսի, զի նուիրեցայց կուսութեամբ երկնաւոր փեսային: Եւ մտի ես ի տուն հիւփորայ հայկազնոյ ի Դունայ քաղաքէ, և սպասաւորեցի նմա զամս երկուս...»<sup>22</sup>:

Այս հատվածի վրացերեն բնագիրը բավականաչափ ընդարձակ է, ուր նիափոր/հիւփոր տերմինը գործածված է յոթ անգամ (բերում ենք քաղվածաբար).

1. Խոլո ԸԸԹ ԵԶԹ ԹԵԹ ԵՍԵՆԵ ԹՏԵՄԵԹԸԸ ԵՆԻԲԵԹԸԸ ԵՆԻԲԵԹԸԸՍԵ (var. ԵՆԹԵԹԸՍԵ Mm, ԵՆԹԵԹԸՍԵ d, ԵՆԻԲԵԹԸՍԵ B) ՏԵՐԵ ԹԵՄԵԹԵԹԸԸՍԵ (յ. Շ., I, 72<sub>18</sub>) — Իսկ նրա քույր Սուսանը ծառայում էր նիափոր (var. նամփոր, նիամփոր, նիաֆոր) Սառա Բեթզեհեմացուն:
2. ԹԵՄԵՆ ԵԳԵՄԵ ՏԵՐԵ ԵՆԻԲԵԹԸՍԵՆ (var. (ՏԵՐ)ԵՆԻԲԵԹԸՍԵՆ M, (ՏԵՐ)ԵՆԻԲԵԹԸՍԵՆ m, ԵՆԹԵԹԸՍԵՆ d, ԵՆԻԲԵԹԸՍԵՆ C) ՅԵԹԵՐԵԹԸՍԵ ԵՍԵՐԵՄ... (յ. Շ. I, 75<sub>14</sub>)—Այն ժամանակ Սառա նիափորը (var. նիփոր, նիամփոր, նիափուր) պատրիարքին ասաց այսպես...:
3. ...ՏԵՆԸԸԸ...ԶԵՆԶԵՐԵՅԵ ԵՍԵ ՏԵՐԵ ԵՆԻԲԵԹԸՍԵՍԵ (var. (ՏԵՐ)ԵՆԻԲԵԹԸՍԵՍԵ M, m) (յ. Շ., I, 76<sub>1</sub>)—Հավանեց Սառա նիափորի (var. նափոր) սույն խորհուրդը...
4. ...ԸԸ ԿՄԸԸԸ ԵՆԵԹ ԹՏԵՄԵԹԸԸԸ ԵՆԻԲԵԹԸՍԵ (var. ԵՆԹԵԹԸՍԵ A, ԵՆԹԵԹԸՍԵ d, ԵՆԻԲԵԹԸՍԵ C, ԵՆԻԲԵԹԸՍԵ M, ԵՆԻԲԵԹԸՍԵ m) ՏԵՄԵԹԸՍԵ ԸԶԸՆԸԸՍԵ ՕՐ ՄԵԸ (յ. Շ., I, 77<sub>2</sub>)—Եվ սուրբ Նինոն ծառայում էր նիափոր (var. նիամփոր, նիափուր, նափոր, նափրո) հայ Դմնացուն երկու տարի:
5. ԶԵԹԵՐԸԸ ԵՍԵՄԵ ԵՍԵ ԿՐԵՅԸ ԿՄԸԸԸՍԵ ԵՆԵԹՍ ՏԵՐԵ ԵՆԻԲԵԹԸՍԵՅԵՆ (յ. Շ. I, 79<sub>1</sub>)—Երբ սուրբ Նինոն Սառա նիափորից լսեց այս բոլորը...
6. ԽՈԸԸ ԵՆԻԲԵԹԸՍԵՆ (var. ԵՆԻԲԵԹԸՍԵՆ A, ԵՆԻԲԵԹԸՍԵՆ m) ԵՄԿԵՅԵ ՅԵԹԵՐԵԹԸՍԵ ՄԵԸԸԸԸԸԸԸ ԵՍԵ (յ. Շ. I, 79<sub>15</sub>)—Իսկ նիափորը (var. նիափորա, նիափորե) պատրիարքին հայտնեց այս ցանկությունը...
7. ԽՈԸԸ ԿՄԸԸԸ ԵՆԵԹ ԵՄԸՆԸԸԸ ԵԿՐ ԵՄԸԸԸԸ ԸՆԵՏԵ ՏԵՄԵԹԸՍԵ, ԵՄԸԸԸԸ ՅԸՐԶԸԸ ԵՍԿԸԸԸԸ ԵՆԻԲԵԹԸՍԵՅԵՆ (var. ԵՆԹԵԹԸՍԵՅԵՆ d, ԵՆԻԲԵԹԸՍԵՍԵ Mm), ԸԸ ՅՐԶԵ ԵՄԿԸԸԸՍԵՄԵ ԹԵՄ ՄՐԸՍԸ ՏԵՄԵԹԸՐԸԸ ԵՅԵՐԵԸԸԸԸ... (յ. Շ., I, 85<sub>15-16</sub>) — Իսկ սուրբ Նինոն փոքր ինչ գիտակ էր հայոց լեզվին,

<sup>22</sup> «Քարտուս Ընտրեթիս ժցեց և ՏԵՄԵԹԸՍԵ ԵՆԻԲԵԹԸՍԵՍԵ», ԶԵՄԸՍԸԸ ԵՄԸ ԵՅԸ ԵՄԸԸԸԸԸԸԸ. ՏԸ., 1953, ԶԶ. 75<sub>13</sub>—77<sub>2</sub>.

որովհետև սկզբում սովորել էր նիափորից (var. նիամփոր, նիափորո),  
և հովիվների մեջ գտավ հայախոսի...

«Քարթլիս ցխովրբայի» համահավաք բնագրի հրատարակիչ ակադ. Ս. Ղաուխչիշվիլին, ինչպես երևում է, կոահել է, որ նիափորը տերմին է, ուստի հատուկ անունների ցանկ չի մուծել, այլ գրել է փակագծում՝ Սառա Բեթղեհեմացու ինքնությունը որոշելիս<sup>23</sup>, բայց չի արտացոլել ու բացատրել հատորին կցած բառարանում: Հանգուցյալ պրոֆ. Ի. Աբուլաձեն «Քարթլիս ցխովրբայի» հայերեն թարգմանության հրատարակության ժամանակ նույնպես կոահել է բառիս տերմինային գործածությունը և արտացոլել բառարանում, առաջաբանում հիշելով Քոնիբերի վարկածը (էջ 028), իսկ ինքը բավարարվել է նիափոր||նիոփոր-ի դիմաց ճճօտրօ (էջ 291) և ճճօտրօ հանդես նիափոր գրելով (էջ 311): Սակայն նրա ետմահու լույս տեսած «Հին վրացերենի բառարանում» յ. Յ.-ի ճճօտրօ/ճճօտրօ-ն արդեն բացատրված է՝ «տաճարի վերադիտող, վերակացու»<sup>24</sup>: Պրոֆեսոր Լ. Մելիքսեթ-Բեկը և տողերիս հեղինակը նիափորը դիտել են իբրև հատուկ անուն՝ նիափորա Դվնացի<sup>25</sup>, որ թյուր է: Բերված վկայակոչություններից, մանավանդ 1, 2, 3, 5 օրինակներից, պարզ երևում է, որ նիափորը Սառա Բեթղեհեմացու-Դվնացու պաշտոնն է, այսպես ասած՝ կոչումը, տիտղոսը<sup>26</sup>: Տարընթերցումների առատությունն ապացուցում է, թե ուշ միջնադարյան գրիչներին ևս տերմինիս իսկական նշանակությունը հայտնի չի եղել: Հետին շրջանի գրչության տվյալներով քննություն չկատարելու համար, անհրաժեշտ է դիմել Լեոնտի Մրովելու՝ բերված հատվածների հեղինակի, սկզբնաղբյուրին, որպիսին «Քարթլի դարձը» (Յոթյնցած թարգմանած) երկն է: Այս հուշարձանի X դ. գրչագրով հայտնի «Շատբերդյան տարբերակում» ամենուր Սառա Դվնացին կոչված է միափոր<sup>27</sup>, որ ինքնին խիստ ուշագրավ ընթերցում է, բավականաչափ մերձ մեր վիճագրերից հայտնի մեփօրել/մեփօրեալ, միփօրել տերմինին: Միափոր և նիափոր ընթերցումների նույնականությունը ապացուցվում է թեկուզ այն

<sup>23</sup> «թարտლის ცხვრება», ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით ს. ყ ა უ ხ ჩ ი შ ვ ი ჲ ო ს მ ი გ რ . 1, თბ., 1955, გვ. 419.  
<sup>24</sup> ი ჲ ო ა ა ბ უ ლ ა ძ ე . ძველი ქართული ენის ლექსიკონი, თბ., 1973, გვ. 328.  
<sup>25</sup> Լ. Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, հ. Ա, 1934, էջ 22, 169: Հմմտ. Պ. Մուրադյան, *Հայ-վրացական գրական-մշակութային փոխհարաբերությունների պատմությունից* (ՀՄՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 10, էջ 161, ծան. 35):  
<sup>26</sup> Հայ-Նրուսաղեմի պատմությանը զբաղվող մասնագետների ուղղորդումներից վերաբերյալ տեղեկությունը վերաբերում է IV դ. առաջին տասնամյակներին և, կարելի է ասել, բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում: «Դվնացի» կոչվելու համար, ինչ խոսք, Սատան Դվին քաղաքից պիտի Նրուսաղեմ գնացած լիներ և միաբանած Բեթղեհեմի կուսանաց անապատում: Նինոն նրանից է հարցնում շարժարանաց, խաչելության և հարության խորհուրդները, «որովհետև ոչ ոք չի եղել և ոչ էլ կար Նրուսաղեմում նրա չափ հավատքի գիտակ մեկը...» («ժ: ցղցը...», I, 110), ասել է թե՛ Դվինի քրիստոնյա համայնքը բավական կազմակերպված միավոր է եղել և սերտ հարաբերություններ ունեցել քրիստոնյա Արևելքի կենտրոնների հետ: Եթե իրապատում է վրացական աղբյուրի այն հաղորդումը, թե Սատայի մոտ գտնվելու նրկու տարիների ընթացքում Նինոն հայերեն էր սովորել, ապա ենթադրելի է, որ Դվնացու վերակացուի տակ գտնվող մենաստանում ապաստանածները գերազանցապես հայուհիներ պիտի լինեին, որոնց շրջանում խոսակցական լեզուն հայերենն էր:  
<sup>27</sup> ძველი ქართული აგოგრაფიული ლიტერატურის ძეგლები, I, თბ. 1963, გვ. 107, 109, 110, 113.



փաստով, որ «Քարթլիի դարձի» երկու տարբերակներում (իմա՛ ս. Նինոյի վարքի երկու խմբագրություններում) այդ տերմինները լիովին փոխարինում են միմյանց:

Վրացական աղբյուրների նիսիուր /միսիուր տերմինի նշանակությանը տասնամյակներ առաջ անդրադարձավ ակադ. Կ. Կեկելիձեն, շրջանառության մեջ դնելով տերմինիս գործածության մի նոր և նշանակալի վկայություն ևս<sup>28</sup>: XI գ. կեսերին Պաղեստինում Քրիզոր հարիտոնամալրավանքին իր ընդօրինակած ձեռագիրը նվիրել է Դերթուսի վանքին և թողել հետևյալ հիշատակարանը (բերում ենք կրճատումներով).

...մը, ցլաճայի սլուլոտա ըս տրուիւր  
Շլուուլո ըս նարհրցի ցլուղլուա մոլլու-  
ցլուա զորուլո ըրս զլլլլլոլ ալլլլլուր  
լլլլուլ մայարիս ցլուլոլուղլուա ըս  
սարլլլլլուղլուոտ Սլլլլլուր զլլլլուա ցլ-  
լլլլուլուա զլլլլուլուա ըմրուլսլմոմոլ-  
լուա, ըսրս ըլրուղլուա, ըս ալլու-  
ր ու ըս ս ըլլլուրուալս, սլլուլուա  
լլլլլլ մլլլլլլուսսս (մլլլլլլուսսս?) . սլլ-  
լլլ ըմլլլլլոլմ մլլլլլուա, ըս յլլլլլու  
սլլլու ըսլս սլլ ըս յլլլլլլլ սսլլլլլլս,  
սալլլլլլլլ ըս սսլլլլլլլլ յլլլլլլ-  
տա ըստա յարլլլլլլ, ըրմլլլն ըլլլ  
սրուս յարլլլլլ մսսլլլլն մս ըսր-  
ս Սլլլ...<sup>29</sup>.

Ես՛ հողով ողորմելի և հույժ մեղա-  
պարտ ու բուրից հետևյալ վանական  
Քրիզորս, արժանացա սուրբ Մակարի  
(Յգիպտացու) թղթերը գրելուն և հա-  
վատով նվիրեցի ս. Աստվածածնի  
սուրբ եկեղեցուն՝ Դերթուսի մենաս-  
տանում (անսպատում) Վաչե Մցուե-  
լիի (Մխուելիի) դուստր Քերրուիսի  
նիսիուրլլլլ ժամանակ: Աստված  
փառավորի նրանց սուրբ ու անթժ  
հողին այժմ և հատկապես հավիտ-  
յանս, հաղութս և ի ընթերցումս ամե-  
նայն վրացի թուրքերի, ուլլլլլ այդ  
մենաստանում Քրիստուսի սպասա-  
վորներ են:

Այստեղից ինքնին բխում է, որ Վաչե Մցուելիի (Մխուելիի ?) դուստր  
«Քերրուիսիս այն ժամանակ եղել է վրաց ձկուսանաց վանքի առաջնորդը»<sup>30</sup>,  
Սուլս հիշատակարանի հրատարակամբ ու վերլուծությամբ Կ. Կեկելիձեն  
վերջնականապես հաստատեց վրացական աղբյուրների նիսիուր /միսիուր  
տերմինի այն ստուգարանությունը, որ դարամուտին առաջարկել էր պրոֆ.  
Ֆ. Քրիստիլը: Մասնավորապես՝ նիսիուրը հունարեն  $\nu\sigma\chi\alpha\rho\iota\varsigma$  բառն է, որ  
նշանակում է տանաբի վերակացու: Ընդ որում, փոխառությունը կատարվել է  
ասորերենի միջնորդությամբ՝ k և p (f) գրերի շփոթումով<sup>31</sup>: Ասորական նման

<sup>28</sup> Կ. Կեկելիձեի, յարլլլլ յալա յլլլլլլլլ-սսգսնմնալոլլլլլլ յլլլլլլ սսլլլալա  
սսլլլլլլա մսլոլլլլլ ալլլլլլլլլլլլ, «լլլլլլլ յալալլլլլ», Կ. XIII.1.943. Վերահրատարակու-  
լլլլլլ ըս յ՛ս յրա՛ յլլլլլլլլլլ. IV, տժ., 1957, զլլ., 212. Հիշատակարանի վերահրատարա-  
կուլլլլլլ ըս յ՛ս յնս՛ յլլլլլ յլլլլլ յլլլլլլլլլլլ, ըլրուղլուա ըս ըլրուղլուա յլլլլլլլլլլլլ  
ըս ըլլլլլ, «ալլլլլլլլլ ըլլլլլլլլլլ», IV, տժ., 1976, զլլ., 78—80, 84. Միլ հետալլլլլլլ  
ըս ըլրուղլուա տերմինին անդրադարձել է և Վ. Ալլլլլլլլլլլլ, այն կապելով հոլլարեն  
 $\nu\sigma\chi\alpha\rho\iota\varsigma$ -ի հետ (յուրադարձ), սակայն առանց հայտնի աղբյուրների ընդլլլլլ (սե՛ս  
«ալլլլլ. ըլլլլլլլլլլ», II, տժ., 1972, զլլ., 41—42.

<sup>29</sup> Կ. Կեկելիձեի, յլլլ. ալլլ., էլ 212: Հմտ. զլլ. մլլլլլլլլ, յլլլ. ալլլ., էլ 84:  
Ձեռագիրն այժմ ստնվում է Քուլլլլլիի թանգարանում (Ք 181, էլ 2):

<sup>30</sup> Կ. Կեկելիձեի, յլլլ. ալլլ., էլ 213:

<sup>31</sup> Marjory Wardrop and J. O. Wardrop, Life of St. Nino, <F. C. Co-  
nybare, The Armenian Version of Djouansher>, „Studia biblica et ecclesiastica“,  
Oxford, 1900, p. 70, հմտ. Կ. Կեկելիձեի, ան., զլլ. մլլլլլլլլ, յլլլ. ալլլ., էլ 79:



նշանակալիորեն լայնանում են. տերմինի գործածությունը չի սահմանափակվել միայն Պաղեստինով, այլ առտնին է եղել և խալիֆայության տարածքում, արարական տիրապետության շրջանում գործածական դառնալով նաև Անդերկովկասում: Նկատառելի է, որ հունական մատենագրության մեջ *νεωκόρος*-ը ունի հնչական-գրչական տարբերակներ, ինչպես օրինակ՝ *νεωκορεια*, *νεωκορειον*, *νεωκόρος*, *νεκόςρος*, *νεκόςρος*<sup>35</sup>, հետևաբար ասորա-արարական միջավայրում կարող էր գործածական դառնալ ոչ անպայման *νεωκόρος* ձևը: Հայերենում ինչ խոսք, նախապես պիտի ունենայինք միափոր, որ -եալ դերբայակերտ վերջածանցի կցումով դարձել է միափորեալ (համտ. նուիրեալ), ապա եա > Ե հնչյունափոխությամբ՝ միափորել—մեփորել:

Նորատուքի և Ականքի արձանագրությունների մեփորել / մեփորեալ / միփորել պաշտոնյան «խագակ հանելու», «փասիլ շինելու» և «խաչ կանգնեցնելու» համար բավականաչափ նշանակալի միջոցներ պիտի ունենար: Ս. Բարխուդարյանի և Ս. Ավագյանի ուսումնասիրությունների շնորհիվ պարզված է, որ միջնադարյան Հայաստանում գոյություն ունեին գյուղի կառավարչին (դեմեթար-մեփորելին) տրվող հարկ՝ դեմեթարահակ անունով<sup>36</sup>, ուստի նա զորու էր նման աշխատանք ձեռնարկելու: Ամենևին զարմանալի չպիտի լինի, եթե մեր վիճակագրից մեկում դեմեթարին—մեփորելին—առաջնորդին տրվող հարկը երբևէ կոչված լինի նաև մեփորելահակ կամ առաջնորդահակ:

## АДМИНИСТРАТИВНЫЙ ТЕРМИН «МЕПОРЕЛЬ | МЕПОРЕАЛ|, МИПОРЕЛЬ»

П А Р У И Р М У Р А Д Я Н

### Резюме

Термин *мепорель / мепореал / мипорель* встречается в надписях 1226 и 1297 гг. из Норатука (Норатус) и Аканка (Акунк). Исследование лапидарных текстов показало, что он равнозначен термину *дэметар* и *арачнорд* (правитель села, надзиратель, старейшина), назначаемых властелем края либо членами его семьи. Они же назначали должностного лица, называющего себя «владыкой мепорелов», которому, видимо, подчинялись сельские мепорели края или региона.

В древнегрузинских нарративных источниках сохранилось слово-термин *миапор-и/ниапор-и*, которое, как установлено (Ф. Конибир, К. С. Кекелидзе), восходит к греческому *νεωκόρος* (служитель, блюститель храма, надзиратель, настоятель). Административный термин *мепорель / ме-*

<sup>35</sup> „A Greek-English Lexicon“, compiled by Henry George Liddell... and Robert Scott, Oxford, 1966, p. 1172.

<sup>36</sup> Ս. Բարխուդարյան, *Նշվ. աշխ.*, էջ 73—80, Ս. Ավագյան, «Հակ հարկային տերմինը վիճակն արձանագրություններում (Հայագիտական հետազոտություններ)», հ. Ա, Երևան, 1974, էջ 53—58):

*пореал / мипорель* армянских источников и *миапор-и / нишапор-и* грузинских текстов суть одного происхождения. Судя по фонетическим изменениям в слове и реальному содержанию термина, греческий *μασχορος* проник в Закавказье в период арабского владычества и через арабский язык.

Примечателен факт проникновения термина из церковного обихода в гражданско-административный, равно как некоторые административные единицы были осмыслены как церковные (*остигап-и, танутер*). Слово *мепорель / мепореал / мипорель* не зафиксировано в словарях армянского языка. Оно не констатировано и в арабском.